ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 133-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ.

«Անշարժ գույքի, անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների կամ այդ իրավունքների նկատմամբ գրավի իրավունքի վերաբերյալ կայացված որոշումը քննիչը Կառավարության սահմանած կարգով էլեկտրոնային եղանակով մուտքագրում է անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան։»:

Հոդված 2. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասում բոլոր «ուղարկում» բառերը փոխարինել «մուտքագրում» բառով, իսկ «ռեգիստր» բառերը փոխարինել «ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 160-րդ հոդվածի 7.1-ին մասում «ռեգիստր ուղարկում» բառերը փոխարինել «ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան մուտքագրում» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասում մասում բոլոր «ուղարկում» բառերը փոխարինել «մուտքագրում» բառով, իսկ «ռեգիստր» բառերը փոխարինել «ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 298-րդ հոդվածի 6-րդ մասում բոլոր «ուղարկում» բառերը փոխարինել «մուտքագրում» բառով, իսկ «ռեգիստր» բառերը փոխարինել «ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան» բառերով:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2026թ., Երևան

ՀՕ - ... - Ն